



ԱԶԳ-ԲԱՆԱԿ
NATION-ARMY

**ԱԶԳ-ԲԱՆԱԿ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԵԴԻԱԴԻՍԿՈՒՐԱԸ
2017**

Երևան

2017



Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ:

Տեքստում արտահայտված տեսակետներն ու պնդումները հեղինակին են եւ կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:



Հետազոտության մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝ «Ռեզիոն» կենտրոնի տնօրեն Լատրա Բաղդասարյանի

Դիտարկման խումբը՝ Սոնա Քյուրքյան, Անժելա Չոբանյան, Մոսի Խանիկյան, Լիլիթ Միդոյան, Մարինե Սարգսյան

Արդյունքների տեխնիկական մշակումը, հաշվարկը, աղյուսակներն ու գրաֆիկները՝ Շողիկ Ստեփանյանի



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգ-բանակ. ֆորմալ եւ ոչ ֆորմալ _____	4
Մեթոդաբանական ուղեցույց _____	6
Բանակի մասին նյութերի ինտենսիվությունը օնլայն ՁԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում _____	12
Ի՞նչ. Ազգ-բանակ եւ բանակի հետ կապված տարրերի սասանում _____	15
Ազգ-բանակ. ինտենսիվություն եւ նշանային վերաբերմունք _____	18
Ովքե՞ր _____	21
Ազգ-բանակին ուղեկցող ինֆորմացիոն ֆոնը _____	22
Տեսակետների շտեմարան. pro et contra _____	24
Բանակի թեմաներով լսարանների հետաքրքրվածության մակարդակները _____	29
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	31
ՀԱՎԵԼՎԱԾ _____	37

2016 թ. հոկտեմբերին ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը պաշտոնապես հայտարարեց «Ազգ-բանակ» հայեցակարգի՝ որպես երկրի ռազմաքաղաքական անվտանգության նոր բանաձևի մասին: Երկու ամիս անց ԱԺ-ն իր նախորդ կազմով ընդունեց հայեցակարգի շրջանակներում առաջ քաշված «1000 դրամների օրենքը»¹, որով քաղաքացիների ամենամսյա աշխատավարձերից 1000-ական դրամներ սկսեցին գանձվել եւ ուղղվել ծառայության ժամանակ հաշմված զինծառայողներին, զոհված զինծառայողների ընտանիքներին սոցիալական օգնություն ցուցաբերող հիմնադրամին: Ներմուծված այս պարտադիր կամավորությունը պաշտոնական Ազգ-բանակի հետ հայաստանյան հանրության առաջին պրակտիկ առնչությունն էր, որը միանշանակ դրական չընդունվեց: Քննադատներ եղան նաեւ այն քաղաքացիների շարքերից, ովքեր մինչ այդ էլ մասնակցում էին բանակայիններին ուղղված հասարակական տարբեր ակցիաների:

2017 թ. գարնանից Ազգ-բանակ գաղափարախոսության տարբեր դրույթների առիթով սկսեցին կազմակերպվել հանրային լոկալ քննարկումներ եւ ելույթներ, որոնց մասին համառոտ տեղեկացնում էր մեդիան: Այսպես հայտնի դարձավ 2017թ. ապրիլին ՀՀ նախագահի, պաշտպանության, գիտության/կրթության նախարարների, բուհերի ու հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ անցած ֆորումի մասին: Նույն տարվա մայիսին մամուլը տեղեկացրեց Հանրային խորհրդում Ազգ-բանակի թեմայով քննարկման մասին: Հունիսին նույն կերպ իմացանք Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ-ի ծրագրով Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպված քննարկումների շարքի մասին: Սեպտեմբերին իմացանք Երեւանում 6-րդ համահայկական համաժողովի շրջանակներում Ազգ-բանակին հատուկ նվիրված քննարկումների եւ սփյուռքի ներկայացուցիչների առաջ պաշտպանության նախարարի ելույթի մասին:

¹ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքը հանրության մեջ շրջանառվում է «1000 դրամների օրենք» անունով:

Ազգ-բանակ հայեցակարգով պաշտոնական նորամուծությունների (հանրային քննարկումների, օրենքների ընդունման, կիրառության մեջ դնելու) հաջորդ փուլը տեւեց մոտ երեք ամիս: 2017թ. հոկտեմբերին ՀՀ ՊՆ-ն ԱԺ ներկայացավ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենսդրական, «Ես եմ» եւ «Պատիվ ունեմ» նոր ծրագրային, բանակից խուսափած անձանց մասին օրենքում փոփոխություններ մտցնելու նախաձեռնություններով², իսկ 2018 թ. հունվարի սկզբին հայտարարվեց «Ես եմ» ծրագրով 120 նորակոչիկի բանակ գորակոչվելու մասին:



Տորմալ առումով այդ արագությունը թելադրված էր այն բանով, որ անհրաժեշտ էր բանակի հետ կապված օրենսդրական փոփոխություններն իրականացնել նախքան Հայաստանի՝ կառավարման խորհրդարանական մոդելին դե ֆակտո անցնելը (2018 թ. ապրիլը): Բայց քաղաքական-գաղափարական տեսանկյունից վաղուց էր հասունացել ժամանակը պաշտոնապես արձագանքելու բոլոր այն սուր հարցադրումներին, որոնք որպես ընդգծված սոցիալական պահանջ հանրությունը բարձրացնում էր 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո .«անվտանգության ամրապնդման համար վերացրեք կոռուպցիան եւ իրավական կամայականությունները», «բանակի համար փող կա, արդյունավետ օգտագործեք պետական ռեսուրսները»:



² Խոսքը «Մահմանված կարգի խախտմամբ զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքում այդ ընթացքում ընդունված փոփոխությունների մասին է:

- Ի՞նչ տեղ էր հատկացնում հայաստանյան մեդիան Ազգ-բանակի թեմաներին, ինֆորմացիոն ի՞նչ գործընթացներով էին ծավալվում հայեցակարգի հանրային քննարկումները մեդիահարթակներում:
- Հատկապես ո՞ր խնդիրներն ու գործընթացներն առավել լայնորեն քննարկվեցին այդ ընթացքում, ո՞ր ուժերի ու խմբերի դիրքորոշումներով էին ուրվագծվում հայեցակարգի ընկալումները օնլայն մեդիայում եւ հեռուստաընկերություններում:
- Ինչպե՞ս արձագանքեցին լսարանները Ազգ-բանակի շրջանակներում առաջ քաշված դրույթներին, լսարանների ի՞նչ հետաքրքրություն էր առաջացնում բանակի թեման իր ամբողջության մեջ:

Այս հարցերին պատասխանելու նպատակով մեր «Ռեզիոն» հետազոտական կենտրոնն անցկացրեց Ազգ-բանակ հայեցակարգի 2017 թվականի մեդիադիսկուրսի ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև:

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ո՞ր ՁԼՄ-ներն ենք հետազոտել

Դիտարկել ենք ռեյտինգային 5 օնլայն ՁԼՄ-ներ՝ 1in.am, News.am, Aravot.am, 168.am, Tert.am:

Ինչպես նաև՝ հանրապետական եւ արբանյակային ծածկույթներով 5 հեռուստաընկերությունների (Հանրային, Արմենիա, Կենտրոն, Երկիր մեդիա, Շանթ) լրատվական («Օրակարգ», «360 աստիճան», «Ժամը», «Պոստֆակտում», «Էպիկենտոն», «Կիրակնօրյա Էպիկենրոն», «Երկիրն այսօր», «Կիրակնամուտ», «Հորիզոն», «Կիրակնօրյա Հորիզոն»), հարցազրույցի («Օրակարգից դուրս», «Օրակարգ հարցազրույց», «Ռ-Էվոլյուցիա», «Ուրվագիծ», «Երկրի հարցը», «Հեռանկար»), թոք-շոուի/հեռուստատեսային հրապարակախոսության («Առաջին տաղավար», «Բանաձեւ ակումբ», «Հայկական ուրբաթ», «Անցում Դուլյանի հետ», «Բարձրաձայն») եւ հեռուստատեսային վավերագրության («Կյանքը սահմանին», «Դիրքերում») ժանրի 23 հաղորդումներ:

Դիտարկել ենք նաև Հանրային (Առաջին ալիք) հեռուստաընկերության միայն արբանյակով հեռարձակվող «Ազգ-բանակ» հաղորդաշարը:

Ի՞նչ թեմա եւ ի՞նչ խնդիրներ ենք հետազոտել

Հետազոտել ենք հայկական բանակի թեման իր ամբողջության մեջ: Նպատակ ունեինք նկարագրել ոչ միայն այդ ընթացքում մեկնարկած Ազգ-բանակ հայեցակարգի հանրային քննարկումների (ծավալվել են հիմնականում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին) լուսաբանման առանձնահատկությունները, այլև եռամսյա հետազոտության (2017թ. հոկտեմբեր – 2018 թ. հունվար) ընթացքում այն ինֆորմացիոն միջավայրը, որը ձևավորվել էր շնորհիվ բանակի հետ անմիջականորեն առնչվող այլ խնդիրների մասին տեղեկատվության մատուցման: Նյութերի բովանդակային վերլուծությունն ըստ դրանց մեջ բարձրացված խնդիրների հանգեցրեց հետևյալ խմբերի սահմանմանը:

Ազգ-բանակ հայեցակարգի խնդիրների խումբը (ընդամենը՝ 15 խնդիր)

- 1. Ծառայություն/գորակոչ** – Ազգ-բանակ հայեցակարգի շրջանակներում առաջադրված օրենքների քննարկումների, դրանց ընդունման գործընթացի, ռազմական ոլորտում սպասվող ընդհանուր փոփոխությունների մասին հայտարարություններ, գնահատականներ, լուրեր եւ այլն:
- 2. Կրթություն/տարկետում** - Տարկետման իրավունքի սահմանափակման/նոր պայմանների ներմուծման առիթով երկրի կրթական համակարգի, գիտության զարգացման գնահատականներ, այդ առիթով իրադարձությունների մասին լրատվություն: Այս խնդիրների խմբում են նաև ռազմական կրթահամալիրների բարեփոխման հարցերը:
- 3. Անվտանգություն** – Սրանք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության բացառապես ռազմաքաղաքական բաղադրիչի մասին դատողություններ, գնահատականներ են Ազգ-բանակի համատեքստում: Այլ խոսքերով՝ Ազգ-բանակի ներմուծման անհրաժեշտությունը ռազմական (պաշտպանունակության բարձրացում, զինվորականների անվտանգություն ռազմաճակատում,

պահեստագործի շրջանում բանակային հմտությունների պահպանում), քաղաքական (ռազմական բնագավառի կառավարում եւ մարդկային ու այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործում), տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից հիմնավորող, կամ հակառակը՝ դրանց միջեւ անմիջական կապը կասկածի տակ առնող դրույթներ են:

- 4. Սպառազինություն** – Հայկական բանակի սպառազինման խնդիրները նաեւ Ազգ-բանակի շրջանակներում. ռազմարդյունաբերության զագացման արդյունքում տեղական արտադրության տեխնիկայով ապահովելու հնարավորությունների, ծրագրերի մասին ընդհանուր հայտարարություններ, ինչպես նաեւ՝ Ադրբեջանի հետ սպառազինման բալանսի, մրցավազքում ետ չմնալու, զենքի ձեռքբերման մասին դատողություններ:
- 5. Սոցիալական** – Սոցիալական արդարության խնդիրները՝ կապված բանակ գորակոչվելու, բանակի այս կամ այն գորքերում, պաշտպանական այս կամ այն գծում հայտնվելու հետ, ինչպես նաեւ՝ Ազգ-բանակի շրջանակներում զինծառայողների/ զինհաշմանդամների, զոհված զինծառայողների ընտանիքների համար նախատեսված սոցիալական ծրագրերի խնդիրները:
- 6. Ներքաղաքական** - Ազգ-բանակ հայեցակարգի նկատմամբ տարբեր քաղաքական ուժերի դրսևորած վերաբերմունքի խնդիրներ, ռազմական ներկա եւ նախկին պաշտոնյաների երկրի ներքաղաքական կյանքում ունեցած դերակատարումների, ազդեցության հարցեր, ԶՈՒ դեկավար օղակներում նշանակումների, պաշտոնանկությունների մասին դատողություններ իշխանական խմբերի միջեւ փոխհարաբերությունների տեսանկյունից եւ այլն:
- 7. Բանակից խուսափում** – Ազգ-բանակի «Պետք է ծառայեն բոլորը» դրույթի առիթով ծավալված մեկնաբանություններն ու տեղեկատվությունը մինչ այդ բանակում չծառայած պաշտոնյաների, նրանց մերձավորների մասին:
- 8. Կոռուպցիա** – Զորակոչի ընթացքում կոռուպցիոն սողանցքների, բանակի ներսում կոռուպցիոն գործարքների խնդիրները Ազգ-բանակի համատեքստում:
- 9. Վերաբերմունք** - Հասարակության վերաբերմունքի, բանակի հետ կապի խնդիրները Ազգ-բանակի համատեքստում:
- 10. Առողջապահություն** – Զինծառայողների բժշկական սպասարկման, գորակոչի ժամանակ բժշկական հանձնաժողովների գործունեության եւ այլ խնդիրներ:

11. **Տնտեսություն/բանակի մատակարարում** – Ռազմական ծախսեր/բյուջետային հատկացումներ/վարկեր, բանակի մատակարարում տեղական եւ արտասահմանյան արտադրողների կողմից, գնումներ բանակի համար, ռազմարդյունաբերական ոլորտի վերականգման, զարգացման խնդիրներ:
12. **Թափանցիկություն** – Բանակի թափանցիկության, բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության խնդիրները Ազգ-բանակի համատեքստում:
13. **Միգրացիա** – Արտագաղթի խնդիրները Ազգ-բանակի ներմուծման արդյունքում:
14. **Ազատություններ** – Ժողովրդավարական ազատությունների խնդիրները Ազգ-բանակի ներմուծման համատեքստում.ազատությունների եւ հայեցակարգի համատեղելիության հարցեր, միլիտարիզացված հասարակության մասին դատողություններ, զինծառայողների իրավունքների խնդիրներ:
15. **Եկեղեցի** – Եկեղեցու եւ բանակի կապը, Ազգ-բանակի շրջանակներում հոգևորականների ծառայության խնդիրները:

Ազգ-բանակի շրջանակներից դուրս խնդիրների խումբը (ընդամենը՝ 10 խնդիր)

1. **Իրավական** - Հայկական բանակում տեղ գտած իրավախախտումների առչնչությամբ քրեական գործերի մասին տեղեկատվություն:
2. **Արտաքին կապեր** – Արտաքին ռազմական կապերի, այլ երկրների հետ ռազմական համագործակցության մասին տեղեկատվություն:
3. **Ղարաբաղյան հակամարտություն** - Տեղեկատվություն Ղարաբաղյան շփման գծում, Հայաստանի սահմանային գոտիներում ռազմական իրավիճակի, միջադեպերի մասին, շփման գոտում ռազմական լարվածության նվազեցման մասին հայտարարություններ ու դատողություններ:
4. **Ադրբեջանական բանակ**–Հակառակորդ բանակի սպառազինման, ռազմական արտաքին համագործակցության, բանակի ներսում կատարվող իրադարձությունների մասին տեղեկատվություն:
5. **Այլ երկրների բանակ** - Հայաստանում տեղակայված ՌԴ ռազմակայանի, ՀԱՊԿ անդամ երկրների բանակների մասին տեղեկատվություն:

6. **Իրադարձային** – ՀՀ ՊՆ-ի, ԳՇ-ի, Արցախի ՊԲ-ի ղեկավար օղակների գորամասեր այցելությունների, ներգերատեսչական եւ այլ հանդիպումների եւ քննարկումների, հայկական բանակի գորավարժությունների մասին տեղեկատվություն:
7. **Դիմանկար** – Ներկայումս զինված ուժերում ծառայող զինվորների, սպաների, Ղարաբաղյան պատերազմի, հետագա տարբեր բախումների ժամանակ զոհված զինծառայողների մասին պատմություններ:
8. **Լուսաբանում** – Բանակային իրադարձությունների լուսաբանման խնդիրներ, նեոարյալ՝ գորավարժություններ եւ այլ գործընթացներ լուսաբանող լրագրողների ուսուցման հարցեր:
9. **Սփյուռք** - Սփյուռքի եւ հայկական բանակի միջեւ կապի մասին դատողություններ, որոնք հնչեցվել են առանց Ազգ-բանակ հայեցակարգի հիշատակումների, վկայակոչման:
10. **Պատմություն** – Հայ ռազմարվեստի, հայ զինվորականների տարբեր աշխարհամարտերին մասնակցության մասին տեղեկատվություն:

Ինչպե՞ս ենք հաշվարկել, ի՞նչ ենք սահմանել

- Այս կամ այն թեմայի ինտենսիվությունը չափել ենք «մեկ նյութ/սյուժե – մեկ կամ ավելի խնդիր» բանաձևով:
- Հետազոտվող թեմայով հանդես եկող քաղաքական, հասարակական, մասնագիտական եւ այլ խմբերի ներկայացուցիչներին սահմանել ենք որպես խնդրի հեղինակներ: Նրանց ակտիվությունը չափել ենք «մեկ հեղինակ՝ մեկ կամ մի քանի խնդիր» սկզբունքով: Մեկ նյութում/ սյուժեում արծարծված խնդիրների քանակը հաշվարկել ենք ըստ դրանց հեղինակների փոփոխության, եւ ըստ ուղերձների նշանների (դրական, բացասական կամ չեզոք) փոփոխության. «Որքան հեղինակ՝ նույնքան խնդիր, եւ որքան նշան՝ նույնքան խնդիր» սկզբունքով:
- Խնդիրների նշանները որոշել ենք՝ ելնելով տեքստերի ուղիղ իմաստաբանական (semantic), այլ ոչ թե ենթատեքստային ուղերձներից:


ԱԶԳ-ԲԱՆԱԿ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԵԴԻԱԴԻՍԿՈՒՐՍԸ - 2017

Հայաստանյան օնլայն ՁԼՄ-ների եւ հեռուստատեսության դիտարկումների արդյունքներ
(2017 թ. հոկտեմբերի 10- 2018թ. հունվարի 10)

Ի՞նչ տեղ էր հատկացնում հայաստանյան մեդիան Ազգ-բանակի թեմաներին: Ինֆորմացիոն ի՞նչ գործընթացներով էին ծավալվում հայեցակարգի հանրային քննարկումները մեդիահարթակներում: Այս հարցերին պատասխանելու համար աշխատանք տարանք բանակի թեմայով նյութերի ինտենսիվությունը պարզելու, ինֆորմացիոն եւ օֆլայն գործընթացների փոխազդեցությունը վերլուծելու ուղղությամբ:

ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՆԼԱՅՆ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՒ ՀԵՌՈՒՄՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ


Հետազոտված օնլայն ՁԼՄ-ները ուսումնասիրության երեք ամիսների ընթացքում ունեցել են տարբեր թողարկային ծավալներ, օրական արտադրելով առավելագույնը 112-ից (Aravot.am) մինչև 310 (News.am) նյութ:




5-ից 3 ՁԼՄ-ներ (News.am, 168.am, Tert.am), չնայած իրենց արտադրողականության տարբեր ծավալներին, հետազոտության երեք ամիսների ընթացքում ունեցել են գրեթե նույն քանակի բանակի թեմաներով նյութեր: Էականորեն ավելի շատ են եղել բանակին առնչվող նյութերը 1in.am-ում, մյուսներից ավելի քիչ՝ Aravot.am-ում: Բոլոր օնլայն լրատվամիջոցները, սակայն, ռազմական ոլորտին անդրադարձել են հիմնականում բանակին ամբողջովին նվիրված նյութերի միջոցով: Բանակին մասնակիորեն (որպես ընդհանուր պատկերի, իրավիճակի մի բաղադրիչ) անդրադարձող նյութերն էականորեն ավելի քիչ են եղել:


Բանակի մասին նյութերի այս զանգվածը լսարաններին մատուցվել է տարբեր ինտենսիվությամբ: Քաղաքական ու հասարակական առավել ակտիվ գործընթացների փուլերում (ԱԺ-ում Ազգ-բանակի պաշտոնական ընդունումը, մեղիահարթակներում այդ առիթով ելույթներն ու բանավեճերը, տարկետման իրավունքի փոփոխման/սահմանափակման դեմ ուսանողական ակցիաները եւ անհայտ ալ գործընթացները) օնլայն մեղիայում հրապարակվել է օրական մինչեւ 36 նյութ:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





5-ից 4 հեռուստաընկերությունների մեր ուսումնասիրած հաղորդումների մեծ մասը եղել է բանակի մասին սյուժեներով:



ԻՆՉԻ՞ՄԱՍԻՆ.

ԱԶԳ-ԲԱՆԱԿ ԵՒ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԱԲՈՒՆԵՐԻ ՍԱՍԱՆՈՒՄ



2017 թ. հոկտեմբեր-նոյեմբերին առավել ինտենսիվ ծավալված քննարկումներն ընդհանուր առմամբ նաեւ պաշտոնական մակարդակում խախտեցին բանակի թեմայի տարուն: Մեղիահարթակներում սկսեցին հնչել բանակի հետ կապված այն խնդիրները, որոնք մինչ այդ բնորոշ էին հայկական սոցցանցային տիրույթներին. կոռուպցիոն սողանքները բանակում եւ գորակոչի ժամանակ, զինծառայողների սպասարկման, անհրաժեշտ պարագաներով մատակարարման հարցերը, բանակի առավել կամ պակաս վտանգավոր հատվածներում հայտնվելու հարցերը, Ղարաբաղյան պատերազմներում մասնակցած անձանց սոցիալական ապահովագրումը, զինվորների ու բարձրաստիճան սպաների նկատմամբ ունեցած տարբերակված վերաբերմունքը, բանակի նկատմամբ հասարակական վերահսկողությունը եւ այլն:

Հայկական բանակին երբեք այս ինտենսիվությամբ եւ խնդիրների այս բազմազանությամբ մեղիան չէր անդրադարձել նախկինում: Ընդ որում՝ երկրի ռազմական գերատեսչության տարբեր աստիճանի ներկայացուցիչների արձագանքներով եւ մասնակցությամբ:



Ինֆորմացիոն գործընթացը զարգանում էր՝ առաջ մղելով ոչ «օրակարգային» թեմաներ: Թեմաներ, որոնք ծագում էին ավելի շատ Ազգ-բանակի շրջանակներում ներկայացված օրենսդրական նախագծերի առիթով եւ անմիջականորեն չէին արտացոլում այդ նախագծերում ամրագրված դրույթները: Օրինակ՝ բանակից խուսափելու թեման

ծավալվեց ոչ միայն տարկետման իրավունքի սահմանափակման/էական փոփոխության առիթով(թե ի՞նչ է որպես չոր արդյունք դա տալու բանակի ամրացման եւ պաշտպանունակության բարձրացման գործին), այլեւ՝ քանի որ կապվում էր սոցիալական արդարության (բանակ են գորակոչվում սովորական մարդկանց երեխաները, պաշտոնյաների երեխաները կամ՝ ոչ, կամ՝ ծառայում են տաքուկ պայմաններում), սոցիալական վերելակի (ներկայիս պաշտոնյաների մեծ մասը չի ծառայել հայկական բանակում, ուստի՝ պետպաշտոնական առաջընթացի համար կարելու պայման պետք է լինի բանակում ծառայած լինելու հանգամանքը), կոռուպցիոն սողանցքների (պրոտեկցիոնիզմ, առողջական կեղծ հիմքերի ձեւակերպումներ), Հայաստանում կրթության եւ գիտության ողջ համակարգում տիրող իրավիճակի հետ:Հոկտեմբերի վերջին խուսափման թեմայի էլ ավելի ծավալման առիթ սվեցին նախկին պաշտպանության նախարար Ս. Օհանյանի կնոջ, ռազմական բժիշկ Ռ. Խաչատրյանի ֆեյսբուքյան էլույթները բարձրաստիճան մի պաշտոնյայի մասին (նրա անունը ակնարկվում էր), որը ժամանակին խուսափել է բանակում ծառայելուց, իսկ այժմ պնդում է տարկետման իրավունքի սահմանափակման անհրաժեշտության մասին: Օնլայն մեդիան բազմակողմանի անդրադարձավ խուսափման խնդրին: Ի տարբերություն հեռուստաընկերությունների, որոնք ինտերնետ տիրություն ալիք բարձրացրած այդ մի քանի գրառումներին չեն անդրադարձել:

ԱԺ-ում այս թեմայով հնչած տարբեր էլույթների առիթով մամուլը տեղեկատվություն էր ներկայացնում ՀՀ տարբեր պաշտոնյաների ու նրանց որդիների բանակում ծառայել/չծառայելու մասին : Մոտավորապես այնպես, ինչպես ընտրությունների ժամանակ ներկայացնում էր տեղեկանքներ այս կամ այն թեկնածուի ֆինանսական կարողությունների մասին: Խուսափման թեման յուրովի լյուստրացիայի մի գործընթաց էր, որը չըջանցեց նաեւ ՀՀ պաշտպանության նախարարին: Նրա՝ բանակում ծառայել/չծառայելու, որտեղ եւ որպես ինչ ծառայելու մասին տեղեկանքը պաշտոնապես հրապարակվեց ընդդիմադիր Ելք դաշինքի կողմից արված պատգամավորական հարցմանն ի պատասխան:

Ներքաղաքական մեկնաբանություններ էին արվում բանակում կատարված բարձրաստիճան պաշտոնյաների պաշտոնաթողության/կամ հնարավոր պաշտոնաթողության մասին դատողություններում, պաշտպանական համակարգի

ներկա եւ նախկին ղեկավարների, ներկա եւ նախկին նախարարների մասին նյութերում, Ազգ-բանակի համատեքստում 2018 թ. սպասվող իշխանական համակարգի տրանսֆորմացիաների մասին հրապարակումներում:

Ջորակոչի/տարկետման իրավունքի խնդիրը խթանեց նաեւ կրթության բնագավառի մասին բավական ինտենսիվ եւ մինչ օրս նման ծավալի ու խորության չհասած քննարկումները: Այս հարցում օնլայն մեդիայի եւ հեռուստատեսային հաղորդումների մոտեցումների առանձնակի տարբերություն չարձանագրվեց: ՋԼՄ-ներն իրենց ամբողջության մեջ մանրամասն քննարկում էին Հայաստանում գիտության զարգացման բոլոր խնդիրները, կրթական համակարգի թերությունները, անգամ մինչեւ այն հարցերը, որ ի տարբերություն արեւմտյան բուհերի այսօր հայաստանյան բուհերում դասախոսությունները վարում են պրոֆեսորները, իսկ սեմինար պարապմունքները՝ ասպիրանտները: Մինչդեռ, պետք է որ հակառակը լինի: Հոկտեմբեր-նոյեմբերին ծավալված ուսանողական շարժում-բողոքի ակցիաները, հացադուլները նույնպես առիթ դարձան անդրադառնալու ներքաղաքական պայքարի, քաղաքացիական շարժումների, խոսքի ազատության եւ այլ խնդիրներին:

Ժողովրդավարական ազատությունների եւ իրավունքների հետ կապված մտավախությունները (որ այս հայեցակարգը կհասցնի հասարակության միլիտարիզացիայի, ռազմականացված երկրում չեն կարող պահպանվել քաղաքացիական ազատությունները, իրավունքները ստորադասվում են պարտականություններին եւ այլն), հնչել են շատ ավելի քիչ անգամ՝ օնլայն ՋԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում ըստ քանակի իրենցից ետ թողնելով ընդամենը երեք/չորս խմբի խնդիրներ: Օնլայն ՋԼՄ-ներում դրանք են՝ պատմությունը, եկեղեցին, սփյուռքը, բանակի լուսաբանումը, իսկ հեռուստահաղորդումներում՝ բանակի լուսաբանումը, Սփյուռքը, այլ երկրների բանակները: Ադրբեջանի բանակը եւ օնլայնում, եւ հեռուստահաղորդումներում ավելի բարձր հորիզոնականներում է:

Բանակի մասին նյութերում բարձրացված խնդիրների ինտենսիվության սանդղակներում օնլայն ՋԼՄ-ներում առաջին 5 տեղերում ծառայություն/զորակոչն է, Ղարաբաղյան հակամարտության շփման գծում տեղի ունեցող միջադեպերի եւ լարվածության թուլացման հետ կապված խնդիրները, կրթության, անվտանգության հարցերը, բանակում

կատարված իրավախախտումների մասին դատավարությունների ու դատավճիռների պատմությունները: Հեռուստահաղորդումների դեպքում առաջին հինգ հորիզոնականներում Ղարաբաղյան հակամարտությունն է (վերը նշված տեսանկյունից), ծառայություն/գորակոչը, կրթությունը, անվտանգությունը, սոցիալական հարցերը:

Բանակի թեմայով նյութերում արձարծված բոլոր խնդիրների ռեյտինգների մասին ավելի մանրամասն տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ. Ինչի՞ մասին:



Հատկապես ո՞ր խնդիրներն ու գործընթացներն առավել լայնորեն քննարկվեցին Ազգ-բանակի ընդունման ընթացքում: Ո՞ր ուժերի ու խմբերի դիրքորոշումներով էին ուրվագծվում հայեցակարգի ընկալումները օնլայն մեդիայում եւ հեռուստաընկերություններում: Մեր հետազոտության մյուս ուղղությունը կազմել էին այս հարցերը:

ԱԶԳ-ԲԱՆԱԿ. ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՆՇԱՆԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Ինչպես նշել ենք վերը բերված մեթոդաբանական ուղեցույցում Ազգ -բանակ հայեցակարգի մասին նյութերում արձանագրել ենք 15 խնդիրներ: Դրանց ինտենսիվությունը գերազանցում է այսպես կոչված ֆոնային (ոչ ազգբանակային) խնդիրների քանակին եւ օնլայն ՁԼՄ-ներում (1,6 անգամ), եւ հեռուստահաղորդումներում(1,8անգամ):

Այսպես, օնլայն ՁԼՄ-ներում Ազգ-բանակի թեմայով խնդիրների քանակը կազմել է բանակի մասին բոլոր խնդիրների 62%-ը, իսկ հեռուստատեսությունում՝ 65%:



Տես ստորև բերված գրաֆիկները:



Ազգ-բանակի խնդիրների նկատմամբ օնլայն մեղիայում եւ հեռուստահաղորդումներում արտահայտված վերաբերմունքի նշանները վկայում են, որ ինֆորմացիոն մակարդակում այն միանշանակ դրական, կամ միանշանակ բացասական տեսանկյունից չի լուսաբանվել:



Օրինակ, բացի 1in.am-ից մնացած 4 օնլայն ՋԼՄ-ներում դրական եւ բացասական գնահատականների ու մեկնաբանությունների քանակը էականորեն չի տարբերվում: 1in.am-ում բացասական ուղերձները կրկնակի գերազանցում են դրական նշանով ուղերձներին: Բացի Aravot.am-ից, մնացած 4 օնլայն ՋԼՄ-ներում չեզոք դիրքերից լուսաբանված Ազգ-բանակի խնդիրների քանակը գերազանցում է դրական եւ բացասական նշանով ուղերձներին միասին վերցրած: Aravot.am -ում այս երեք նշաններով խնդիրների քանակը գրեթե համաչափ է:



Հեռուստատեսային հաղորդումների պարագայում ընկերությունից ընկերություն պատկերը տարբեր է: Բոլորից քիչ բացասական գնահատականներ/կարծիքներ հնչել են Առաջին ալիքի եթերում, դրական գնահատականների առումով առաջ են անցել

Արմենիան եւ Շանթը: Կենտրոնի եւ Երկիր մեդիայի եթերներում Ազգ-բանակի առիթով հնչած դրական եւ բացասական ուղերձներով խոսքը գրեթե նույնքան է:



Օնլայն մեդիայում եւ հեռուստահաղորդումներում չեզոք դիրքերից ներկայացված նյութերի ճնշող մեծամասնությունը բանակի մասին լուրերն են եղել՝ պատրաստված մեդիայի կողմից:



ՈՎՔԵՐ

Օնլայն ՁԼՄ-ներում եւ հեռուստատեսությունում դրական նշանով արտահայտվածների շարքում մնացածից էականորեն առաջ են եղել ՀՀ ՁՈԻ ներկայացուցիչները, պետական գործիչները: Հեռուստաընկերություններում նրանք միասնաբար կազմել են բոլոր «խոսող գլուխների» 1/3 մասը (32%): Օրինակներ կարելի է բերել ինչպես Ազգ-բանակի պաշտոնական ընդունման մասին օրվա լրատվությունից, այնպես էլ մեդիային տված հարցազրույցների շարքերից: Այս առումով առանձնանում են ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի «Արմենիա» հեռուստաընկերությանը տված բացառիկ հարցազրույցը, որտեղ նա անդրադառնում է նաեւ Ազգ-բանակի խնդիրներին («Բանաձեւ», 15.12.2017), պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի հենց այս թեմաներով բացառիկ հարցազրույցները «Արմենիայի» («Ռ-Էվոլյուցիա», 29.10.2017) եւ «Շանթի» եթերում («Հեռանկար», 23.12.2017):

Հայեցակարգի մասին բացասական նշանով արտահայտված անձինք օնլայն ՁԼՄ-ներում հասարակական/մասնագիտական տարբեր խմբերի ներկայացուցիչներ են եղել, կամ առանձին փորձագետներ: Հեռուստաընկերություններում՝ Ազգ-բանակի այս կամ այն դրույթի նկատմամբ բացասաբար արտահայտվածների շարքում դարձյալ առաջին տեղում այս խմբի ներկայացուցիչներն են: Թեեւ, ի տարբերություն օնլայն մեդիայի, հեռուստաընկերություններում ոչ պետական եւ ոչ քաղաքական սեզմենտների ներկայացուցիչները նաեւ մոտավորապես նույնքան դրական գնահատականներ են տվել հայեցակարգին: Ընդգծենք, որ առաջին պարագայում հասարակական եւ մասնագիտական խմբերի ներկայացուցիչների եթերում հնչած քննադատական խոսքը

մեծ մասամբ կապված է եղել օրվա լրատվության հետ: Իսկ դրական կարծիք հայտնողները մեծ մասամբ հեռուստատաղավարներ հարցազրույցների հրավիրված հյուրերն են եղել:

Հայաստանյան քաղաքական ուժերից թե օնլայն ՁԼՄ-ներում, թե հեռուստահաղորդումներում Ազգ-բանակի առնչությամբ արտահայտվածները գլխավորապես եղել են խորհրդարանական կուսակցությունների, խմբակցությունների ներկայացուցիչները: Օնլայն ՁԼՄ-ներում նրանց ռեյտինգն ունի հետևյալ հաջորդականությունը՝ ՀՀԿ (5,5%), Ելք (4,5%), Ծառուկյան դաշինք (0,9%), ՀՅԴ (0,4%): Հեռուստատեսությունում այս հերթականությունը պահպանվել է:

Ի տարբերություն հեռուստաընկերությունների, օնլայն ՁԼՄ-ներում բանակի թեմայով արտահայտված արտախորհրդարանական ուժերն ավելի շատ են՝ Երկիր Ծիրանի կուսակցություն, Ազատ դեմոկրատներ, Առաքելություն կուսակցություն, Ազգային պետություն կուսակցություն, ՀԱԿ:

Հեռուստատեսությունում եթերում հնչել են միայն երկու (Երկիր Ծիրանի եւ Ժառանգություն) կուսակցությունների կարծիքները բանակի խնդիրների մասին:

Ավելի մանրամասն տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ. Ովքե՞ր եւ ինչպե՞ս:

ԱԶԳ-ԲԱՆԱԿԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՖՈՆԸ

Բանակի մասին, բայց Ազգ-բանակ հայեցակարգի ընդունման գործընթացի հետ առաջին հայացքից չառնչվող խնդիրների շարքում կան մի քանիսը, որոնք քարոզչական տեսանկյունից սպասարկում էին Ազգ-բանակի առանցքային դրույթները. «բանակը սովորական քաղաքացիներինն է» եւ «կա կապ բանակի ու ժողովրդի միջեւ՝ թելադրված անվտանգության հրամայականով»: Այս գիծը ցայտուն պատկերվում էր, օրինակ, «Կյանքը սահմանին» հաղորդաշարի 12 թողարկումներից յուրաքանչյուրում: Ամեն մեկը նվիրված էր սահմանամերձ մեկ բնակավայրի, յուրաքանչյուրում իրենց առօրյան ներկայացնելու հնարավորություն ունեին երեք կարգի հերոսներ՝ սովորական բնակիչները, այդ տարածքում տեղակայված ՁՈԻ ստորաբաժանումների զինվորներն ու սպաները, այդ զորամասերում ծառայող հոգեուր սպասավորները: «Դիրքերում» հաղորդաշարի մեր հետազոտության ժամանակահատվածում եթեր հեռարձակված

թողարկումները նույնպես ցույց են տալիս, թե որքան են գործնականում բարելավվել շփման գծի կահավորումը, ենթակառուցվածքները: Սա մի կողմից՝ բացառապես զինծառայողների դիմանկարներ կերտող հաղորդաշար է, մյուս կողմից՝ Ազգ-բանակի հետ կապված առարկումներին, բանավեճերին բանակայինների շուրթերով, տեղերից արձագանք է: Օրինակ՝ տարկետման իրավունքի հետ կապված սուր բանավեճերի ֆոնին «Դիրքերում» հաղորդաշարը հարցեր էր ուղղում զինվորներին՝ ծառայությունն իսկապե՞ս իրենց խանգառելու է հետագայում կրթությունը շարունակելու գործում: Կամ՝ հոգեւոր ճեմարանի ուսանողներին տարկետում տալ/չտալու, բանակում նաեւ կրոնական ազատությունների ու իրավունքների մասին բանավեճերի ֆոնին «Դիրքերում»-ը նույն հարցն ուղղում էր զինվորականներին՝ պարտադի՞ր է, արդյոք, ոչ առաքելական եկեղեցու հետեւորդ զինվորականների համար աղոթքներին մասնակցելը եւ այլն:

Հայրենասիրական պաթետիկ ուղերձներ էին պարունակում բանակում ներկայումս ծառայող տարբեր աստիճանի զինվորականների մասին պատմությունների/դիմանկարների շարքերը, որոնք լսարաններին էին ներկայացնում եւ օնլայն ՁԼՄ-ները, եւ հեռուստաընկերությունները:



Առհասարակ Ազգ-բանակ հայեցակարգի ընդունման գործընթացի օրերին այսպես կոչված ոչ ազգբանակային խնդիրներից յուրաքանչյուրն ընկալվում էր իր ուրույն քարոզչական գործառնությով: Օրինակ՝ բանակում եւ բանակայինների կողմից տարբեր իրավախախտումների գործերով դատավարությունների մասին տեղեկատվությունը, որը հետագոտության ժամանակահատվածում էական տեղ է ունեցել (օնլայն ՁԼՄ-ներում այս խնդիրների խումբը գրավում է 5-րդ հորիզոնականը, առաջ անցնելով՝ սոցիալական, ներքաղաքական, կոռուպցիայի եւ մի շարք այլ, օֆլայն խորհրդարանական հարթակներում առավել ինտենսիվ քննարկվող խնդիրներից), լսարաններին ներկայանում էր ուղերձով՝ բանակում հանցագործությունները բացահայտվում եւ մեղավորները պատժվում են: Նախկինում բանակում իրավախախտումների առիթով այս քանակի հաղորդագրություններ մեղիային չեն տրամադրվել:



Հեռուստաընկերություններում վերը բերված օրինակները համալրվում էին նաև բանակի մասին առանձին վավերագրական եւ գեղարվեստական ֆիլմերով/հաղորդումներով, սոցիալական հոլովակներով («Սահմանին» սերիալը՝ Շանթում, բոլոր հեռուստաընկերություններում ձմեռային գորակոչին ընդառաջ՝ ՊՆ-ի կողմից պատրաստված «Ես եմ» ծրագրի մասին հոլովակը):

Հանրայինի միայն արբանյակային լսարանների համար հեռարձակվող «Ազգ-բանակ» հաղորդաշարը թողարկումից թողարկում անդրադառնում էր հայեցակարգի հետ կապված տարբեր եզրերի: Միջինը 20 րոպե տեւողությամբ հաղորդումները ռազմական ոլորտում Սփյուռքի դերակատարման, հայեցակարգը կյանքի կոչելու համար Սփյուռքը ներգրավելու մասին չէին: Այլ՝ թե ի՞նչ է Ազգ-բանակը ռազմաքաղաքական, սոցիալ-հոգեբանական, ազգային գաղափարախոսության, Ղարաբաղյան հակամարտության հետագա զարգացումների եւ մի շարք այլ տեսանկյուններից: Համահայկական աշխարհագրական ասոցիացիան այս հաղորդաշարը ներկայացնում էր ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ:

Զինվորական համազգեստով մարդկանց ներկայությունը հեռուստաընկերությունների էթերում ավելացել էր նաև այնպիսի հոլովակների շրջանառման արդյունքում, որոնք թեմատիկ առումով բացարձակ ոչ մի աղերս չունեին բանակի հետ: Ինչպես օրինակ՝ շրջակա միջավայրը մաքուր պահելու կոչերով ՀՀ կառավարության ծրագրով պատրաստված «Մաքուր Հայաստան» սոցիալական հոլովակներից մեկը:

ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ. PRO ET CONTRA

Մեդիահարթակներում արտացոլված բանավեճերը հիմնականում ծավալվել են կրթության, տարկետման իրավունքի, սոցիալական արդարության, կոռուպցիոն սողանցքների, առողջապահական համակարգի, անվտանգության եւ շոշափեիորեն ավելի քիչ՝ ժողովրդավարական ազատությունների հարցերով: Բերվող հիմնավորումները

հաճախ հակադիր համեմատական են եղել «ընդունում եմ/չեմ ընդունում, կվնասի/չի վնասի, կնպաստի/չի նպաստի» սխեմայով: Ստորեւ բերված օրինակները այդ շարքերից են:

Կրթություն/գիտություն/տարկետում

■ **Pro** - Տարկետման իրավունքի փոփոխությունը բարձրացնելու է բուհերի կրթական մակարդակը, քանի որ «բուհերում սովորելու են նրանք, ովքեր իրոք ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ և ոչ թե նրանք, ովքեր բուհերն օգտագործում են բանակից խուսափելու համար»:

■ **Contra** – «Փաստացի տարկետում տրվում է այն ուսանողներին, ովքեր ավարտելուց հետո պետք է ծառայեն որպես սպա: Այսինքն՝ իրենք չեն նպաստելու գիտության, կրթության զարգացմանը: Օրինագծից բխող հետևանքները՝ սովորելու մոտիվացիայի կտրուկ անկում, բուհ ընդունվողների թվի կրճատում, դպրոցահասակ տղաների արտագաղթ, գիտությամբ զբաղվելու և Հայաստանում մնալու մոտիվացիայի վերացում»:

■ **Pro** – Օրենքը նպաստելու է այն բանին, որ «գիտությամբ կզբաղվեն նրանք, ովքեր իսկապես ուզում են զբաղվել գիտությամբ: Կան օրինակներ, երբ բանակից հետո շարունակել են եւ կրթությունը, եւ գիտական աշխատանքները», «Հայաստանում գիտական աստիճան ստացողների միայն 12-15% է մնացել գիտության ոլորտում: Սա ոչ մի միջազգային չափանիշի մեջ չի տեղավորվում»:

■ **Contra** – Օրենքը վտանգելու է գիտության զարգացումը, քանի որ «չի բերվել համապատասխան վերլուծություն և փորձագիտական աշխատանք, որով հիմնավորվի, որ բանակից հետո մարդիկ գալիս և ավելի լավ են սովորում», «Բանակը փոխում է մարդու աշխարհայացքը եւ դրանից հետո կրթությունը շարունակել չեն ուզում», «Երկու տարվա ընդմիջումը վնասում է կրթության անընդհատությանը, ինչը հատկապես կարեւոր է բնագիտական ոլորտում», «Անդառնալի հարված հասցնելով գիտական մտքին և նորարարությանը, այն խիստ կասկածի տակ է դնելու ողջամիտ ապագայում արդիական տնտեսություն, կրթական, առողջապահական, պաշտպանական համակարգեր ունենալու հնարավորությունն ու հեռանկարը»:

■ **Pro** – Օրենքը վերացնելու է անարդարությունն այս հարցում, քանի որ «կես միավորի տարբերությամբ մեկը գնում է բանակ, մյուսը շարունակում է կրթությունը բուհում»:

■ **Contra** – «Աղարություն հաստատել առանց այս օրենքի էլ կարելի է, արդարություն հաստատելու գործը զինվորական ծառայության հարցից չեն սկսում, դա արսուրդ է»:

■ **Pro** – «Բոլորը պետք է ծառայեն բանակում, եւ սա է արդարության վերականգման եղանակը»:

■ **Contra** – «Հետևանքներն անկանխատեսելի են, համաձայն չեմ պնդման հետ, թե դրույթը միտված է սոցիալական արդարության վերականգնմանը: Սա նախագիծ է, որ սոցիալական արդարության կարգախոսի ներքո մեզ տանելու է սոցիալական բևեռացման», «Այս օրենքը որևէ գործիք չի տալիս՝ բանակում հավասարություն ստեղծելու: Կարելի էր արդարություն հաստատել առանց այդ օրենքի, եթե լիներ ցանկություն, և վաղն այդ արդարությունը չի հաստատվի, եթե չլինի ցանկություն»:

Կոռուպցիա/ առողջապահություն/արտագաղթ

■ **Pro** – Օրենքը եւ տարկետման փոփոխությունը նպաստելու են կոռուպցիոն սողանցքները փակելուն, «Մենք նվազեցնում ենք կոռուպցիոն ռիսկերը՝ սոցիալական արդարությունը պահելով: Բոլորի համար գործում է մեկ օրենք»:

■ **Contra** – Տարկետման փոփոխությունը «ստեղծելու է նոր կոռուպցիոն ռիսկեր առողջապահության և պաշտպանության ոլորտներում», «Եթե կրթության ոլորտում կա կոռուպցիայի խնդիր, ինչո՞ւ դա չի լուծվում ոլորտի ներսում, այլ փոխվում է տարկետման համակարգը», «Խնդիրը կտեղափոխվի այլ ոլորտ՝ բժշկասոցիալական հանձնաժողովներ, և հանկարծ կպարզվի, որ մարդիկ, որոնք իրենց վարքագծով առողջ մարդու տպավորություն են թողնում, ունեն «դարակազմիկ» հիվանդություններ և կազատվեն զինծառայությունից. դա անընդունելի մոտեցում է»:

■ **Pro** – «Այսուհետեւ բուժզննումների եւ հետազոտությունների ընթացակարգերը, ինչպես նաեւ զինվորական ծառայություն կրելուն հակացուցված հիվանդությունների ցանկը կորոշվեն կառավարության որոշմամբ՝ ներկայումս գործող կարգի փոխարեն, երբ հաստատում է պաշտպանության նախարարը»:

■ **Contra** – «Առողջական խնդիրներ ունենալու պատճառով բանակից ազատվողների թիվը սուկալի մեծ է, բայց, քանի որ այդտեղ պայքարելը բարդ է, խնդիրներ են առաջանում, դիմողները շատ են, ներքին կոռուպցիոն ռիսկեր են առաջանում, գնացել են այս տարբերակով»:

■ **Pro** – Օրենքը չի կարող նպաստել արտագաղթին, «Բացարձակ ոչ, որովհետև տարկետումից օգտվում է հասարակության շատ փոքր հատված, մնացածը պարտադիր ծառայության ժամկետի տակ են: Հետևաբար՝ չեմ կարծում, որ օրենսդրության նման վերանայումը մեծ խթան էր դառնալու լրացուցիչ ինչ-որ արտագաղթային հոսքերի»:

■ **Contra** - Սկսված գործընթացն արդեն իսկ խթանում է արտագաղթին, որը մտահոգվելու լուրջ առիթ է: Արտագաղթը նոր թափ է առնելու այս օրենքով, «Բանն այն է, որ ուսման հիմքով տարկետման իրավունքի չեղարկումը, որը բազմաթիվ քաղաքացիների համար զինվորական ծառայությունից խուսափելու «սողանք» էր հանդիսանում, հիմա շատերի համար ծառայությունից խուսափելու նոր դուռ կարող է բացել՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը եւ այլ երկրի քաղաքացի դառնալը», «Ես նաև ուսուցիչ եմ աշխատում, ու ամեն անգամ սեպտեմբերի 1-ին ցավով նկատում եմ, որ տղա երեխաների ծնողներն իրենց երեխաների հետ հեռանում են Հայաստանից: Լավ կլիներ, որ իրենք դուրս գային իրենց կաբինետներից ու մտնեին ժողովրդի մեջ»:

Անվտանգություն

■ **Pro** – «Նոր մեխանիզմները եւ կարգավորումները առավելագույնս նպաստելու են, որ մենք իրականացնենք պատշաճ պաշտպանություն, զինված ուժերի արդյունավետ դեկավարում եւ վերահսկում»:

■ **Contra** – «Մեր բանակում արձանագրված կորուստների միայն կեսն են թշնամական գործողությունների հետևանք, մնացած դեպքերում գործ ունենք ոչ արդյունավետ կառավարման, ոչ կանոնադրական հարաբերությունների հետևանքների հետ: Պատերազմի հավանականությունը հակադարձ համեմատական է Հայաստանի կառավարման էֆեկտիվությանը: Որքան վատ է կառավարումը, այնքան մեծ է պատերազմի հավանականությունը»:

■ **Pro** - «Եթե երկիրը պաշտպանված չլինի, ինչքան ուզում է երկրում գիտնական լինի, դա քոռ կոպեկի արժեք չունի: Առաջինը պետք է մտածենք պաշտպանության մասին»:

■ **Contra** – «Զենքի միջոցը ամենավերջինն է, որ պիտի օգտագործվի, մինչ այդ կա գիտելիքի ուժ, տնտեսական անվտանգություն, լավ դիվանագիտություն, երբ դրանք թուլանում են, մնում է սպառազնությունը»:

■ **Pro** – «Բոլոր փոփոխություններն ունեն մեկ վերջնական նպատակ. ամրապնդել մեր պաշտպանունակությունը, կատարելագործել հակառակորդին զսպելու մեխանիզմները և բարձրացնել զինձառայողների իրավական ու սոցիալական պաշտպանվածության մակարդակը»:

■ **Contra** – «Բայց ցավոք, բանակի հզորացումը չի կապվում նոր տեխնոլոգիաների ներմուծման հետ, այլ գլխաքանակի ավելացման, որն ինքն իրենով վտանգ է ներկայացնում»:

Ազատություններ

■ **Pro** – «Նրանք, ովքեր օրինական հիմունքներով ազատվել են զինվորական ծառայությունից, պետք է հստակ իմանան իրենց անելիքը պատերազմի դեպքում: Դա որեւէ կապ չունի միլիտարիզացիայի հետ»:

■ **Contra** – «Այս օրենքով հասարակությունն ու երկիրն ավելի են միլիտարիզացվում», «Երբ մեր պետության մեջ առաջնահերթությունը տրվում է բանակին եւ ոստիկանությանը, սա խոսում է այն մասին, թե ինչպիսի հասարակություն են ուզում կառուցել իշխանությունները: Եթե մենք ուզում ենք Հայաստանը դառնա Իսրայել, մի մոռացեք, որ Իսրայելի կարեւորագույն բաղադրիչը ժողովրդավարությունն է, որը դուք ոտնահարում եք կեղծ հայրենասիրական պաթոսի ներքո»:

Ինչպե՞ս արձագանքեցին լսարանները Ազգ-բանակի շրջանակներում առաջ քաշված դրույթներին:


Լսարանների ի՞նչ հետաքրքրություն էր առաջացնում բանակի թեման իր ամբողջության մեջ:

Սրանք մեր հետազոտության մյուս ուղղության հարցադրումներ էին, որոնց պատասխանը օնլայն մեդիայի օրինակով է ներկայացված:


ԲԱՆԱԿԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Առանձին բացառություններով, օնլայն ՁԼՄ-ների լսարանների արձագանքների եւ բանակի թեմաներով նյութերի կարդացվածության աստիճաններն այդ լրատվամիջոցներին բնորոշ տիրույթներում են եղել: Չնայած այն հանգամանքին, որ բանակի թեման ստաբիլ ուշադրության արժանացող թեմաներից է համարվել հատկապես վերջին մի քանի տարիների ընթացքում:

Օրինակ՝ 1in.am-ի բանակի թեմայով բոլոր նյութերի մոտ կեսը կարդացվել է 1000-ից մինչեւ 5000 եւ ավելի անգամ, Aravot.am-ի այդ կարգի նյութերի կեսը՝ 100-500 կարդացվածության տիրույթում են եղել, 168.am-ի նյութերի ճնշող մեծամասնությունը՝ 88% -ը, մնացել է 1-500 տիրույթում:



Ավելի ցածր է եղել լսարանների ակտիվ արձագանքների մակարդակը: Բոլոր լրատվամիջոցների բանակի մասին նյութերի ակնհայտ մեծամասնությունը կայուն ստացել է 1-500 like/share. 168.am-ի նյութերի 91%-ը ունեցել է 1-100 like/share:



Առանձնակի հետաքրքրություն են առաջացրել մի քանի, տարբեր բնույթի, տարբեր խնդիրներով նյութերը, որոնք միեւնույն ժամանակ կարդացվել են սովորական ցուցանիշներից մի քանի տասնյակ անգամ ավելի, եւ մի քանի հազարով ավելի հավանության են արժանացել: Ի տարբերություն, ասենք, հայաստանյան մեդիայի կողմից Ազգ-բանակի շրջանակներում ինտենսիվ լուսաբանված տարկետման եւ այդ առիթով

կրթության եւ գիտության բնագավառի խնդիրների արձագանքներին: Այդ թվում՝ ուսանողական բողոք-երթերի, հանդիպումների, հացադուլի մասին նյութերը:

Առավել կարդացված եւ լսարանների կողմից առավել արձագանքված նյութերը բանակում հանցագործություն կատարած զինձառայողների նկատմամբ քրեական գործերի մասին պատմություններ են, ներքաղաքական խնդիրներով սկանդալային բնույթի հրապարակումներ, շփման գծում վիրավորված եւ այժմ բուժում ստացող նախկին զինձառայողների մասին պատմություններ, բանակում ծառայության ժամկետի փոփոխման մասին նյութեր եւ այլն: 1in.am –ում բանակի թեմայով առավելագույն կարդացված նյութը «Վիզեն Սարգսյանին «փչացնելու» օպերացիան հաջողությամբ ավարտված է» հոդվածն է (բանակից խուսափելու թեմա), կարդացվել է 160 920 անգամ: Aravot.am-ում առավելագույն կարդացված նյութի՝ («Ադրբեջանական զինուժը գնդակոծում է Բարեկամավանը», Ղարաբաղյան հակամարտության թեմա) ցուցանիշը՝ 13647 է, 168.am-ում այս ընթացքում ամենից շատ անգամ կարդացվել է «ՊՆ հետ պայմանագիր կնքած պարտադիր զինձառայության ժամկետը սահմանվում է մոտ 3 տարի, իսկ տարկետման իրավունքը խիստ սահմանափակվում է» նյութը (կարդացվել է 12413 անգամ եւ երեք անգամ գերազանցել է կարդացվածության հաջորդ ամենաբարձր ցուցանիշին)³:

